

գործին անուշագիր գիւղացիների պատճառով։ Որք քան էլ սակաւ լինին այսպիսի անպէտք խոտերը՝ այնու ամենայնիւ նոցանից իւրաքանչիւրը խլում է հացարոյսերից մի որոշ տեղ և արգելում է նորան ազատ կերպով աճել։ որովհետեւ ինչպէս հացարոյսերին այնպէս և բոլոր միւս բոյսերին հարկաւոր է խոնաւութիւն և անունդ։ Գիւղացցոց ուժապահ եղած վարելահողերի մէջ գտնուած անունը հացարոյսերին անգամ չի բաւեւ ուր մնաց օտար և անպէտք բոյսերին։ Անպէտք խոտեր կարող են յառաջ գալ նաև վատ աղբից և ակօսակներին ու միջակները չքանդելուց բայց ամենից շատ ի հարկէ, հացարոյսերի սերմերի մէջ եղած աղբից։ Գիւղացցիներից շատերը բոլորովին չեն հաւատում այդ բանին, նորքա ասում են, որ գաշտում խոտերի սերմերն անյայտ կերպով են յառաջ դալիս՝ «աւերելու» և այդ։ Որպէս թէ հացարոյսերի սերմերը ամեն տարի նոյն են լինում, իսկ օտար խոտեր դաշտերում մի տարի շատ է աճում, միւս տարի՝ ընդհակառակը, շատ քիչ։ Բայց դրանից մի տարի չորային լինելու պատճառով երեսն է գալիս մի այլ բոյս իսկ միւս տարի խոնաւութեան պատճառով մի ուրիշը։ Այստեղից կարելի է եղբակացնել, որ գիւղացցոց համար աղբոտ սերմացուն այսպիսի հանգամանքներում ոչ մի վնասակար գեր չի կարող խաղալ։ Բայց սխալ է այդ, Այս բանը կարելի է բացատրել շատ պարզ կերպով։ Զանազան տեսակի անպէտք խոտեր սերում են զանազան եղանակներու, նոցանից մի քանիսը արագ կերպով աճում են, երբ ամառը խոնաւ է լինում, միւսները կարող են յառաջ գալ նաև ամառուայ չոր եղանակին։ Այդ վնասակար խոտերի սերմերը հացարոյսերի սերմերի հետ միասին ընկնելով հողի մէջ, կարող է պատահել։ որ առանց բուսնելու, երկար ժամանակ պասկած մընան, երգելոն էլ կարող են ամրող տարիներով անվնաս մնալ իւրեանց որրանում, իսկ յետոյ, յանկարծ, մի օր յարմար եղանակին բոլորը միասին միանգամբ գլուխ կրաքրացնեն և գուրս կդան։

Այս բոլորից արգեն կարելի է եղբակացնել, որ հացարոյսերի սերմերի մէջ եղած վնասակար բոյսերի սերմերը միշտ նուազեցնում են բերքը, և միշտ ստիպուած այդպիսի աղբոտ սերմերը սովորականից խիտ են ցանում։

(ԱՌ ՀԱՅՐՈՒՆԱԿԱՆԻՑ)

Գ. Ղ.

## ՔՆՆՈՒԹԻՒՆ ԴԱՐԱԲԱԴԻ ԲԱՐԲԱՌԻ

(Եարու ակուրացին) \*

Գ. Բառի սկիզբը.

Ե բառերու սկիզբը կը կը հետեւեալ ձայնափոխութիւնները.

1. Նախ կը վերածուի յէ (ցէ) վանկին. այս մասին եղած ամբողջական օրինակներն են՝ յեզր՝ եղն. յիշակ կամ յիշակ՝ եղեղեցին. յիշիսկօրու՝ եղմիսկոպու. յէն ես, յերկզ կամ յըրկին երեկ. յիշմիյ՝ երկինք. յերզիր՝ երկիր։

Ե-ի այս ձևափոխութիւնը՝ որ նոյն է մեր արգի երկու գրական բարբառներուն նախատառե-ի արտասանութեան հետ, ծաղած պիտի լինի հետեւեալ եղանակով։

Մի քանի հայ բարբառներու մէջ (այսպէս Մուշի, Ալաշկերտի, Սուշավայի) բառամէջի շեշտեալ կամ նաև անշեշտ ե-ը ստացած է երկրարբառացին իէ Տնչումը։ Տարակոյս չկայ որ Վարաբաղի բարբառն, ինչպէս նաև մեր երկու գրական լինելուն ծնունդ տառող մայր բարբառներուն մէջ՝ նախաձայն ե-ը է սկզբան ուներ այս երկրարբառային իէ արտասանութիւնը՝ որ հնաց սկզբնաձայն լինելուն համար հետզհետէ թանձրանալով վերածուած է յէ միավանիկն։

Ե-ի այս փոփոխութեան հետ ուղիղ համեմատական է գրաբարի նախատառ և ձայնին ձևափոխութիւնը, որ արգի երկու գրական լեզուներուն մէջ վերածուած է վօ, իսկ Վարաբաղի բարբառն մէջ ինչպէս յետոյ պիտի անանինք, վիկ հնչման։ Մի քանի հայ բարբառներու մէջ (այսպէս Մուշի, Ալաշկերտի)՝ նաև Տերբառակոյս, Եւգոկիս ելնից ինչպէս որ բառամէջի շեշտեալ կամ նաև անշեշտ ե-ը ստացած է երկրարբառացին իէ Տնչումը, նոյնպէս նաև նոյն գիրքով և ձայնը վերածուած է երկրարբառային ու կամ ննչման։ Ե ձայնին պէս նախատառուն ալ Վարաբաղի բարբառն նախական վիճակին մէջ ուէ, իսկ մեր գրականները ծնող մայր բարբառն մէջ ուէ հնչումը ունեցած ըլլալու էր. սրոնք հետզհետէ թանձրանալով յետոյ ծընունդ տուին վիկ և վօ ձևերուն։

Ե-յէ ձայնափոխութեան ընթացքը որոշելով կը պարզուի նաև Վարաբաղի բարբառն ա-յէ ձայնաշընթեան, որու վրայ խոսած ենք ար-

զես էջ 459, ըսթացքը: Ա-ը յշ-ի են փոխած յշդ-նկյաց՝ աղաւնի, յիշմել՝ յաղթել, յիշա՝ աղտ յիշուո՞ւ աղտոս, յիժի՝ արժել, յիշլ՝ աչել (գու-աշել) ձեւըք. Ա ձայնն ասոնց մէջ անցած պիտի լինի ուրեմն ա-ե-իշ-յշ շրջաններէն, որով վերիններուն նախնական ձեւըն են՝ աղս—\* ախս—\* իշս—\* իշմա—յիշա:

2. Աերի ձեւըն մէջ յի ձայնը մէշտ շեշտեալ էր, ըստի յիքիսկօրու՝ և յիշմելյց անկանոն բառերէն: Երբ յի շեշտէ առաջ գտնուիր շեշտագրութեան ընդհանուր կանոնին համաձայն կը վերածուի ըլ ձեւն: Ըստ այսոմ յորիկ՝ երէկ և յորիկ՝ եղան՝ կուգան նախաւոր \*յիշլի և \*յիշդի ձեւըն: Առոր համեմատ ալ վերի յիքիսկօրու և յիշմելյց բառերուն ուղիղ և կանոնաւոր ձեւը պիտի լինէր \*յըրսկիրու և \*յրդնեյց:

3. Ե-ը ա-ի են մերածած արկար՝ երկաթ, արկամ՝ երկանք, անտիք՝ երգայք և արագ՝ երազ բառերը. վերջինը թաղոս գիւղի բարբառով կ'ըսուի տրագ. որով և—ո:

4. Ե վերածուած է իւ ձեւն հետեւալ բառերուն մէջ, իւրիւմբը կամ իւրումբը՝ երգումն, իւրիցի կամ բրագի՝ երեկոյ: Խոկ նոյն իւ ձայնին վրայ նախաւոր շունչ մըն ալ աւելցուցած է իւրը, երգ, երդեք:

5. Յոդէն խօսած ենք վերը էջ 27 թէ երկալիանի բառերու մէջ յաջորդական երկու հ-երէն առաջներ կը վերածուի իւ ձայնին. յիշուած օրինակներէն այս տեղ կը վերաբերին՝ յիշն՝ երես, յիշ՝ երեք, յիֆի՝ եփել: Ե-ը ի-ի վերածած է նաև յիփ՝ եփի: Խոկ այս իւ ձայնին վրայ նոյնպէս նախաւոր և շունչն աւելցնելով՝ նիր կամ նիրի՝ երք:

6. Ե եղած է կ երկան՝ երկան և երկու՝ երկու բառերուն մէջ, ա-ի յաւելուածով նաև ներկայ՝ երինչ:

7. Շեշտագրութեան ընդհանուր կանոնին համաձայն բառանկիզբի ե-ը ը ձայնին են վերածած Վարարազի հետեւալ ձեւըք. բրիցի (կամ յարիցի)՝ երեկոյ, բրէստի՝ երեսուն՝ յրդին՝ երեալ, բրկըցրնել՝ երկայնացուցանել. ընթերակ կամ և շունչն յաւելմամբ երմերակ՝ երանի (փի. \*բրանկի):

8. Նախատառ ե-ը բոլորովին՝ կորսնցուցած են դիյնը՝ եղունդ, րիփ՝ երախ, խման՝ երեխայ բառերը:

9. Ե ձայնն իրը նախատառ երկու բառի մէջ միայն կը պատահէն Վարարազի բարբառին մէջ, այն է իշ՝ էդ ե էշ՝ էշ, որով նոյն ձայնաւորն անփոփոխ պահած են:

#### Դ. Բառի վերջը.

Երկար շպիտի լինի խօսիլ այս մասին, օք-

նակներու չափազանց ուսկաւութեան պատճառով բառանկիզբի մէջ կը գտնենք միայն երկու օրինակի մէջ. այն է թաղկապը, և զյրեկի կամ կյունկի՝ կեւրակէ: է-ա և է-ի ձայնափոխութեանց մասին տես վերը:

#### Ը

1. Ը բառի սկիզբը կը պատահէ միայն հրնգիր՝ ընկեր ձեւն մէջ՝ որ նախաշունչ և մը աւելցուցած է:

2. Բառի մէջ պատահած անդիր ը-երը համաձայն են գրական արտասանութեան, օր, կյուղի՝ գզել. պրինձ՝ ըթինձ, պրիմ՝ բւթ. ասրիմ՝ տառազ, կյունի կամ կյունին՝ գլուխ. մըգրդիկ՝ մըլըտեւ և լին:

3. Բառամէջի այս անդիր ը ձայնը երբեմն իր նախորդ կամ յաջորդ ձայնաւորին աղջեցութեան տակ կը վերածուի իւ ու օ ի թէ, և ձեւըուն. օր, պահօն կամ պահուուծ՝ ըժօժ (մետաքսի խոզակ). կուկու, կկու, զիւրից՝ զրոյց, միմի, մանկ. կամ մարմայ՝ ճրագ. նրիդի կամ նմանի, ննջել. վլէսկիս, ոոկը, անյիկ՝ տագր. իորկ՝ կրեայ. սիցիր կամ թաղոս գեւզի բարբառով պեցուր, խեկ Գորիս սոյցը՝ բարձր. արբիշիմ՝ աթըզում (թուրքականէն):

4. Ուրիշ բաղաժամէնի յաւելման կամ ներդաշնակութեան պատճառաւ. ը աւելցուած է ըլլրանցրակ՝ նապատակի հրապարակ՝ պարապալ տրմրեկ՝ թմբեւ, խրփիսի կամ խրցիմին՝ հարբուխ, երիշըրակ՝ հնեշտակ, պրցրանակ՝ բարձրանալ, խըմարման խանձրահամ, բաշակ՝ սատակել բառակառուն մէջ. նոյնակո ը է աւելցած փօխը՝ փուքս, սանը՝ տէր, օիծը՝ օձ, կուպը ձեւերուն ծայրը: Խոկ տաք, տասն, օիսք, յիզիր՝ եղն, տոներ՝ գուռն և լին բառերու ը, նր վերջաւորութեան մասին տես այս դլաուն և հատուածին մէջ:

#### Դ

Գրարաբի ի ձայնին Վարարազի բարբառին մէջ կըած ձեւափախութիւնները հետեւալներն են:

#### Ա. Ե շեշտի տեսսակէտով

1. Անգուիուս մնացած գրաբարի միավանկ բառերուն մէջ մինչև խոկ բաղմալանկի վերածուած ժամանակ. օր, յէր՝ քիթ, ցից՝ ցից, մըկ՝ մըկ, ինյը՝ ինքն, լիյն՝ լի, ինն՝ ինն: —«Ճի» բառն է միայն որ միմի ձեւն վերածուելով տեղափոխութեան է իր շեշտը:

2. Բազմավանկ բառերու շեշտեալ ի վերածուած անշեշտի, օր, փիսկնձ՝ փոխինդ, սար՝

տարեկ՝ կօրդիկ՝ կուրեզ՝ կմղնիկ՝ կաղնի. վիշի՝ ոջիւ. կօղնի՝ ողնի:

3. Աերջավանկի շեշտը վերջներ ի-ին  
վրայ տեղափոխուած. օք թշնամ կոմ իխշամ  
եշխան. զիդալ՝ գետել. կիմի՝ դինե. ծիլ՝ ածելի  
լիսփի՝ մազել. բէդիմա՝ պիտի:

4. Նախընթացքներ վանկերու ի-երը իբր անշեշտ վերածուած ը-ի. օր, սրբանդ՝ թիթեռնիկ, ցցիկնալի՝ ծիծեռնակ. ծծո՞ղիկ՝ ծիծագել, տնանալ՝ դիմանալ, ըննանուն (թէև կայ նաև իննանուն) իննուուն:

5. Հակառակի ընդհանուր կանոնների շեշտուածնեցու մեջափոխուելու՝ մնացած վերջի վայնիկելու վրայ, բայց գարձեալ նախորդ անշեշտ ի ընկած այսպէս են՝ յշէր՝ գեշեր, ընի՛ լինել, ապրչան (թէև կայ նաև տափանն)՝ առտիճառն:

6. Հոլովման և ածանցման ժամանակ ի ընկած շեշտի տեղափոխութեան պատճառաւ . օր. յրէրի քթերու. սրբունէրան՝ ոհսեանէրէ. Ամբոննէրավ՝ լիմոններով և լն:

7. Անշեշտ ի ձայնին բոլողովին ընկնելուն  
օքինակ չունինք. իմի՞ «աւելի» ձևը կազմուած է  
առև (հմմտ. առ-աւել) արմատականէն. իսկ սխա-  
լը բառին մէջ «սպիտակ» ձևին ի ձայնը աեղա-  
փոխուած է միան:

8. Քացառութիւններ՝ որոնց մէջ անշեշտ ի ձայնն ընկած չէ. այսպէս են՝ միմիբարեկ՝ մինիթա-  
բել, իմնասուն՝ հմ., յերփակիքոս՝ եպիսկոպոս, խվիրի-  
կամ՝ վրդիմի՝ վայրենի ձևերուն ի ճայները. իսկ ին-  
նասուն՝ իննասուն և տափան՝ աստիճանն ըստերն  
ունին նաև իրենց կանոնաւոր ըննասուն և ասլ-  
յան ձևերը.

### **Բ. Ի բանի սկիզբը**

ի այս գերբեն մէջ միշտ անփոխիս կը մնայ  
եղած օրինակինքուն ամբողջութիւնն է. Իլից՝  
եւ, իւկե, իմ՝ իմ՝ ինք՝ լնն. ինչյ՞ նպան. իշխան  
կամ ինշամ եշխան. մինչեւ իսկ իմաստուն՝ հմ՝ փո-  
խանակ մինելու ըմաստուն:— Ինձաստուն բառը գոր-  
ծածական է նաև ուզգագոյն ըննաստուն ձեռով:  
Իսկ «ի՞նչ» բառը նախաւոր չունչ մը ստանալով  
գարձած եղած է իմ:

9.. Ի բառի մէջը եւ վերջը

Ի ձայնը բառի մէջ կամ բառի վերջ կը կըէ  
հետեւալ փոփոխութիւնները:

1. Առհասարակ կը մնայ ի. օք. տարսին  
գարբին. կօնի՞ ողնի. իցու՞ յիսուն. սիսկո՞ն ու-  
սեռն. ծի՞ ձի. մարի՞ էդ հնդկանաւ (գրաբարի  
«մարի» բառէն). կնշի՞ հմ. հիլի՞ հայելի. նմիմ՝ ու-  
նիմ.

2. Նոյն ձայնը քիչ աւելի բացուելով կը մերածուի ոչ ձայնին, որու մասին եղած ամրո-

ջական օրինակներն են, թերեւ քենի, ամրէս՝ ամբա-  
ժանքէ քանի, յամքէ քամի, մրէս՝ միս, մրէսկ՝  
միտք, մրէր՝ միւ. Անըլէ նօթէ, պանքրէ պաւութք,  
պլինդ՝ պինդ, անմիքը՝ առմիթ. հնագիրէ կազսի, կա-  
ցրկն կացին, ծիրանն ծիրան, խմեցրէ խնացի, խմա-  
մրէ խնամք, ծրէծ ծրէ, ծրէս՝ ծրէ, ծրէրէ ծրէս,  
կորչէզ կոռչէզ, կծրէզ կծրէզ, կրմըշէզ կրմէզ, կրմէ-  
կր, յանքէ կամ յանեն, և կամ լոմին, շամիշ,  
նըլինարքյայ, նաւակատիք, բրտիկ՝ տոլիպ, սլու-  
սիւս, անմիքը՝ առմի:

3. Նոյնը դեռ աւելի բացուելով կը վերած  
ու եւ վերջապէս է ձայնին. այս մասին ալ եղած  
օքնակներուն ամբողջական ցուցուկը հետեւան  
է, հանձն անիծ, ամի՞թ. (Գորիսի բարբառով)՝ ա-  
նիծք, թէ այլուր անիծի, թե՞նի՞չ անիծել. և պայց  
բռնիկ (փլա). \*պէսիզյ, որ երօք ալ կայ Գորիսի  
բարբառուն մէջ պէսիզյ ձեռով)՝ և դիմ՝ գեղեն. լյորկ  
գարեի. յլիսկ եկեղեցի. հիւրեն՝ երինջ. զէտէզ՝ զատիկ.  
րի՝ թի. րոկի՝ թրիք. լիկ՝ լեղի. լիւման՝ լիւման. ծաղկյ՝  
ծաղկիկ. կրօնին կամ տիկնին կաղին. կարկ կամ կա-  
րիմ կարճճ. կրէնկիյ՝ կեռիք (ասամո՞ն, ակասայ).  
շինո՞ւ կշեռ. հիւռո՞ւ հեռու. հիւզյ՝ հիւզ. մնկակ  
մանելշակ. մօլակ՝ մօլիկը. մօրկ՝ մօրի (ելակի). յիկ՝  
յիկ. վլէսկի՝ ուսկի. եկ՝ ուզե. հնոկ՝ ուռի. լանին  
(կամ լանիրէ, լո՞մինէ)՝ չամիլչ. պիկնճ՝ պիկնճ. ճօրկ՝  
չորի. վիզ՝ վիզ. տանկ՝ տարի. տիկ կամ տիզյ՝ տիկ.  
սնկո՞ւ տակութ (արմատ). ցիկ՝ ցից. փախնճ՝ փա-  
խնճ. ժկր՝ ժկրի.

Այս երեքն գուրս ի կը կըէ նաև մի քանի  
մասնական փափոխութիւններ՝ հետեւել կերպով.

4. ի-իւ՝ այսպէս են՝ սրբաճաշիլու՝ սերեկելը.  
ըլլելիք՝ կանճթ (սուսամ). կյուրիւ՝ կարմիր-  
միզիկ՝ վեցել. զիւրգ՝ գերեկ: Գորիսի բարեառուն  
նաև հովիւ՝ ագի: որ այլուր հովիւ ձեն ունի,

5. ի-կը. այսպէս են՝ հրանիկից՝ հարսանիք. կուզ կուզիկ. կուզի կուզի. միշտից՝ լունք. միշտիկից՝ ճիշդմ+աղիք. յիշինկոյ՝ աղաւնի. ակոյ՝ տիկ. Արվեհանկոյ՝ նաւակատեք. այս փափսխութեան պատճառը յաջորդ է, յ ձայներն են՝ որոնք իրենց փափկացած յ մասք տուած են նաև նախորդ և ձայնեն: Այս ձեւերը դորժածական են նաև պարզապէս ե-ով. այսպէս Թաղօս գիւղի բարբառով հրանիկ, յնձկոյ, յնպէկոյ և լուն: — Պորիսի բարբառը անփոփոխ պահելով ունի յիշինկի, անմանի:

6. ի-ը. այսպէս են՝ ըրտկի տախով. սրու՝  
սիրու. թէ զբանա՝ պիտի ձևերը. առոնց միշտ առաջին  
երկուքը յատուկ են թաղոս գիւղին. իսկ այլուր  
ըրտկի, սկիւր: Գալով բառամեջի անշեշտ ի-երու-  
թի վերածուելուն: այս մասին տես շեշտագրու-  
թեան բաժնին մէջ:

7. ի-ստ. այս փոփոխութեանը կըած են  
մօխուր՝ մախիք և բնւրում թօնիք (փե. \*բուխուր)  
բառերուն ի-երը.

8. ի—ս. միայն յրահենք՝ քրտինք և հշափ՝ վեշապ բառերուն մէջ:

9. ի—ս. այս ալ մուսննա՝ մատանի և բրւնակ՝ թիթեռնիկ ձեւերուն մէջ միայն:

10. Աւելորդ ի մտած է ձիթի՝ ճճի բառին մէջ:

11. Մի քանի բառերու ծայրն աւելցուած է րկ կամ և մասը՝ որոնք անշուշտ նախնական ի-ի մը ձեւափոխութիւննեն են. այս յաւելուածն ունին մօրք՝ մօտ պապիկ՝ պապ. ըշլիկապիկ՝ աչքակապ. բրւնակ՝ թիթեռնիկ—իսկ խուփ. լրիկ՝ երէկ՝ ծիյս՝ ձախ. մոր (եւակ):—նոյն է յաւելուածը բառի մէջ հակոսկ՝ կճակ:

(Պը ՀԱՅ ԵԿԱԿԱՆԻՒՅ)

Հրաշեաց Յ. Ածառեան



## ՀԱՅԱԳԻՒԹԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ



1. Gelzer. Die Genesis der byzantinischen Themenverfassung, Leipzig, 1899. Verl. Teubner.

Ուսուցչապետ Գելցերի անունը անյայտ է նոյն իսկ մեր միջակ ընթերցողներին. իրաւամբ նա հաշուկ է վայելում Եւրոպայի սահմանաթիւ Հայագէտների մէջ: Բազմաթիւ հն նորա գիտնական երկերը բայց մեզ համար նշանակութիւն ունին յարգելի ուսուցչապետի այն գործերը, որ մեր աղքատիկ հայագիտաւթեանն են վերաբերում: Ուսուցչապետ Գելցերի հայագիտական գրուածքները հետեւալներն են 1) Die Anfänge der armenischen Kirche-Հայոց եկեղեցու սկզբաւորութիւնը 1895 թ. 2) Zur armenischen Götterlehre 2) Real-Encyclopädie հանրահաշուկ աստուածաբանական բառարանի Արմենիա յօդուածը. 4) Sextus Julius Africanus und die byzantinische Chronographie I Theil u. II Theil 1. Abtheil. Leipzig, B. G. Teubner 1880—1885. II Theil 2 Abt. Leipzig. I. C. Hinrichs 1898\*: Մեզ համար առանձին նշանակութիւն ունի

այս երկի երկրորդ մասի երկրորդ բաժինը, որ ասորա-Հայկական ժամանակագիրներին է, վերաբերում, այսինքն Միքայէլ Ասորի, Մար-Սոլոմոն Ժի գալու, Ստեփաննոս Տարօնեցի Ասորիկ, Սամուել Անեցի, Վարդան մեծ և Միթմար Այրիվանեցի, Վերջապէս ներկայ գիրքը, որ թէև ամբողջապէս Հայագիտական չէ, բայց մեծ կազ և նշանակութիւն ունի նաև Հայոց պատմութեան համար:

Հեղինակը այս զբքով կամենում է բիւզանդական զինուորական թեմերի բաժանման նկարագիրը առաջ իւր սկզբաւորութեան ժամանակներում: Թէև այս նիւթը ուսումնակիրութեան առարկայ է եղել և ուրիշ զիտնականների կողմից, որպիսին Fnlay, Rambaud, Ramsay, Schlumberger, Bury և մանաւանդ Փրանսիացի գիտնական Diehl, \*\* բայց այս բոլոր զիտնականները օգտուել են միայն թու և ժարու աղբիւրներից, զինուորապէս Կոստանդնու ծիրանածնից անտես անելով Հ: գարու յունական և ապա արաբական աղբիւրները: Հեղինակը վերջին աղբիւրներն են ուշազբութեան առնելով մի նոր և լիակականար ուսումնասիրութիւն է տալիս:

Հեղինակը նախ պարզում է Յուստինիանու մեծի (527—565) օրով կատարուած փոփոխութիւնները: Դիոկղեաթիանոս և Կոստանդնու մեծ, հռովմէական պետութեան նոր կազմակերպութիւն տուող կայսրները, այն ինչ զինուորական և քաղաքական հաստատութիւնները բաժանել էին միմեանցից, Յուստինիանու ընդհակառակն քաղաքական ընդհացանին զինուորական իրաւունքներ և տուեցի: Նդիպտոսի կուսակալը մի և նոյն ժամանակ զինուորական պետն էր նահանգին որ 600 հոգուց բաղկացած մի զօրագունդ ուներ իւր ձեռքի տակի խռովայաց Ազեքսանդրիայի մէջ խաղաղութիւն պահելու համար: Պատմական մի երեսյթ, որ աւելի ընդարձակ կերպով տեղի է ունենում թու զարում, երբ զինուորական թեմերը նոր կազմակերպութիւն են ստանում: Սակայն զինուորական թեմերի բաժանման համար շատ աւելի կարեօր նշա-

\* Առաջին երկուսը բարգմանուած են հայերէն.

\*\* L'origine du régime des Thèmes dans l'empire Byzantin, Paris, 1896.